բագոյն երևեցաւ»· որ «յիսուն և հինգ ամ գիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբ»· որ «կրկին վկայասէր երևեցաւ և զանյայտ պատմութիւնս սրբոց ի լոյս ածէր»· որ «յոյժ ուսումնասէր գոլով և մարտիրոսաց պատուող՝ մարտիրոսաց պսակացն եհաս» և այլն։

Գր· Խլաթեցու անունով հասել են մեզ այլ և այլ գրուածքներ։[2] Աւելորդ չենք համարում առաջ բերել դոցա համառօտ ցուցակը՝ օգտուելով մեր ձեռքի տակ եղած աղբիւրներից։ Հարկաւ, ցանկալի էր ստուգել այս ցուցակը Խլաթեցու հնագոյն և ընտիր գրչագիրների հիմամբ և դորանով աւելի ճիշտ որոշել մեր հեղինակի գրականական գործունէութեան ծաւալը, որ պէտք է խոստովանել, սակաւ ծանօթ է և բնաւ չէ ուսումնասիրուած։

1· Նախ յիշելու է նորա Տաղերը, որոնց տուների կամ տողերի սկզբնատառերը սովորաբար հեղինակի անունն են կազմում։ Դնում ենք այստեղ մի քանի Տաղերի վերնագրերը՝ հետևելով Հ·

2· Համեմ· մանաւանդ Հ· Ց· Տաշեանի «Ցուցակ Հայ· ձեռ· Մատ· Մխիթ· ի Վիէննա, 1895—96, էջ 543 եւ ցանկը՝ էջ 1074։